

Բանալի բառեր՝ փոքր և միջին բիզնես, հարկեր, պետական աջակցություն, մրցակցություն:

ՀՏԴ 336 : 658

### ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԿԱՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՐԶ

#### Արթուր ԱՌԱԲԵԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,  
ՀՊՏՀ «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրության կազմակերպման» ամբիոնի ասիստենտ

**Յ**ուրաբանցյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում անգնահատելի է փոքր և միջին ձեռնարկատիրության դերը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը նպաստում է մրցակցության խթանմանը, ներքին ռեսուրսների օգտագործման աճին, մարզերի հավասարաչափ զարգացմանը:

Այն ունի նաև սոցիալական նպատակներ. նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության եկամուտների աճ, սոցիալական արդարության ամրապնդում, արտագաղթի նվազում և ներգաղթի խթանում, հասարակության բարոյափոխության և մշակութային բարեփոխման նպատակներով, միջին խավի ձևավորում:

2000 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են գերփոքր, փոքր և միջին առևտրային կազմակերպությունների: Ընդ որում՝ գերփոքր են համարվում այն կազմակերպությունները, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ շրջանառությունը մինչև 100 մլն դրամ: Փոքր են համարվում՝ մինչև 50 աշխատող և 500 մլն դրամ շրջանառություն ունեցողներ կազմակերպությունները և միջին՝ մինչև 250 աշխատող և 1,5 մլրդ դրամ տարեկան շրջանառություն ունեցողները:

Սակայն իրականում հասարակության մեջ առավել լայն տարածում է ստացել ՓՄՁ համարելը շրջանառության հարկ վճարողներին: Այսինքն այն տնտեսվարող սուբյեկտներին, ովքեր օգտվում են հարկային արտոնությունից:

Իհարկե, ՓՄՁ պետական աջակցության բազմաթիվ ձևեր կան, որոնք սահմանված են օրենքով, օրինակ՝ խորհրդատվության տրամադրումը, տեղական արտադրանքի խթանումը, կադրային ներուժի զարգացումը, սկսնակ գործարարներին աջակցությունը, վարկային երաշխավորությունների տրամադրումը, վարկային տոկոսադրույքների մասնակի ֆինանսավորումը և այլն, սակայն շրջափելին հարկային արտոնության տրամադրումն է՝ շրջանառության հարկի կիրառման միջոցով: Եթե հավելվեք, որ վերջին մի քանի տարիներին, կապված ֆինանսական միջոցների սղության հետ, առարկայական ֆինանսավորում չի իրականացվում, իսկ ՓՄՁ աջակցությունն էլ սահմանափակվում է խորհրդատվության տրամադրմամբ, հարկային արտոնության դերն ավելի է մեծանում:

ՀՀ-ում 2016թ. ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալը կազմել է 1,8 տրլն դրամ, որի հիմնական բաժինը ընկնում է առևտրին և ծառայություններին՝ 48 տոկոս, մշակող արդյունաբերությանը՝ 12 տոկոս, կացության և հանրային սննդի կազմակերպմանը՝ 4 տոկոս, առողջապահության և բնակչության սպասարկմանը՝ 4 տոկոս: Հարկ է նշել, որ մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 867 մլրդ դրամ շրջանառության 42 տոկոսը բաժին է հասնում գերփոքր կազմակերպություններին, 30 տոկոսը՝ փոքրին, իսկ 27 տոկոսը միջինին:

ՓՄՁ ոլորտում աշխատում է 302 հազար մարդ, որոնցից 101 հազարը՝ գերփոքր կազմակերպություններում: Նրանցից 36 հազարը զբաղված է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում:

ՓՄՁ սուբյեկտներ համարվող ակտիվ հարկ վճարողների քանակը կազմում է 78 հազար, որից 71 հազարը՝ գերփոքր կազմակերպություններ են:

Սակայն նրանք միասին վճարում են 393 մլրդ դրամի հարկ, որից միայն 6,6 տոկոսն է (26 մլրդ դրամ) բաժին հասնում մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի գերփոքր կազմակերպություններին:

Ստացվում է, որ առևտրի ոլորտի շուրջ 40 հազար տնտեսվարող սուբյեկտներին, ասեսք, հարկերից ընդհանրապես ազատելը պետության համար կարժենար 26 մլրդ դրամ:

Հարց է առաջանում, թե ինչու է պետությունն այդքան մեծ ուշադրություն դարձնում շրջանառության հարկին: Ինչու է սկզբում դրվում պարտադիր փաստաթղթաշրջանառության պահանջ, ինչու են հետագայում տարբերակվում շրջանառության հարկի դրույթաչափերը:

Խնդիրը կայանում է այսպես կոչված պարզեցված հարկերի կիրառման առանձնահատկությունից՝ պայմանավորված ծախս հիմնավորող փաստաթղթերի անհրաժեշտության բացակայությամբ: Բանն այն է, որ նախկինում շրջանառության հարկի շեմում գործող տնտեսվարող սուբյեկտը որևէ պարտավորություն և շահագրգռություն չունեի ապրանքների մատակարարներից ընդունելու հաշիվ արարանքագրեր:

Դեռևս 2000 թվականի հունիսի 5-ին ընդունված պարզեցված հարկի մասին օրենքով՝ հարկը հաշվարկվում էր շրջանառությունից՝ անտեսելով կազմակերպության ծախսերը:

Հետագայում, երբ պարզեցված հարկը վերափոխվեց շրջանառության հարկի, մի պահ էլ նույնիսկ այս երկուսի փոխարեն հարկային արտոնությունը տրամադրվում էր ԱՎՀ-ից ազատման ձևով, միևնույն է շահութահարկի գումարները վճարվում էին հասույթի 2-ից 10 տոկոսի չափով: Այսինքն՝ 10 տոկոս հասույթից՝ ծախսային փաստաթուղթ չունենալու և հասույթը գրեթե ամբողջությամբ շահույթ ճանաչելու դեպքում:

Սակայն վերջին տարիներին, երբ սկսվեց հիմնական ապրանքատեսակների դրոշմապիտակավորման գործընթացը, հատկապես խոշոր բիզնեսը, ով այդ ապրանքներն արտադրողն էր կամ ներմուծողը, կանգնեց իր արտադրանքը փոքր և միջին ձեռնարկությունների միջոցով իրացնելու դժվարության ամջև: Բանն այն է, որ խոշոր բիզնեսը այլևս ստիպված էր պարտադրել փոքրին ընդունել հաշիվ ապրանքագրեր՝ իր արտադրանքի իրացումն ու դրոշմապիտակների սպառումը ապահովելու համար, իսկ փոքրերը, ընդունելով այդ հաշիվ ապրանքագրերը, անցնում էին շրջանառության հարկի սահմանված շեմը՝ ընկնելով ընդհանուր հարկման դաշտ, որտեղ հարկային բեռը միանման պայմաններում 10-12 տոկոսով ավելի է:

Այս հանգամանքը բերեց փոքր ձեռնարկատիրության բուռն դժգոհության, ինչը լուծվեց պարտադիր փաստաթղթաշրջանառության պահանջը չապահովելու դեպքում 5 տոկոս շրջանառության հարկի դրույթաչափի կիրառման:

Սակայն շեմի խնդիրը այդպես էլ չլուծվեց: Այն 58 մլն դրամից բարձրացվեց մինչև 115 մլն դրամի, իսկ նոր հարկային օրենսգրքով՝ 2018թ. անցումային դրույթներից հետո՝ 2019թ. սահմանվում է դարձյալ 58,35 մլն դրամ: Սա թերևս լուրջ խնդիր է ինչպես փոքր, այնպես էլ խոշոր ձեռնարկատիրության համար, քանի որ վերջիններս, չկարողանալով պարտադրել փոքրին ընդունել հաշիվ ապրանքագրեր, երբեմն արտադրանքը փաստացի վաճառում են փոքր սուբյեկտին, իսկ հաշիվը գրում այլ՝ իրենց կողմից ստեղծված կազմակերպության անվամբ՝ մուծելով նաև նրա հարկը: Ուստի, հարկ ենք համարում շեշտել, որ փոքր բիզնեսի համար ներկա պայմաններում հարկային արտոնություններ տրամադրելու ամանցքային խնդիրը ոչ թե հարկի տոկոսադրույթն է և դրա չափը, այլ հարկային արտոնության կիրառման տարեկան շրջանառության շեմը:

### Օգտագործված գրականություն

- ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ, Armstat.am
- ՀՀ ՏՄԴԴՀ պաշտոնական կայքէջ, Competition.am
- ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, Minfin.am
- Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»
- <http://ampop.am/small-and-medium-enterprises/>
- <https://www.smednc.am>

Ներկայացվել է 29.11.2017թ.  
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.